

Ռուբէն

ԱԽԱԼՑԻԱ-ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ջավախքին սվիրված անտիպ ուսումնասիրություն*

Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից է, ով ծանրակշիռ ներդրում ունի նաև Հայաստանի առաջին հանրապետության պետականաշինության բնագավառում: Հայաստանի անկախության կորստից հետո Ռուբենն անցնում է արտասահման, որտեղ իր զինակիցների հետ ձեռնամուխ է լինում հայկական Սփյուռքի կազմակերպման ծանր ու պատասխանատու գործին:

Սփյուռքում Մ. Տեր-Մինասյանը, կուսակցական գործունեության հետ մեկտեղ, զբաղվում է նաև հետազոտական աշխատանքներով: Նրա գրչին պատկանող աշխատություններից ամենաարժեքավորը ծավալուն հուշագրությունն է, որը նախապես լույս է տեսել Բոստոնի «Հայրենիք» ամսագրի էջերում, ապա հրատարակվել է յոթ հատորով¹: Ռուբենը ոչ միայն փայլուն հուշագիր էր, այլև խոր գիտելիքների ու վերլուծական մտքի տեր անձնավորություն: Առանձին գրքերով, նաև սփյուռքյան բազմաթիվ թերթերում և ամսագրերում նա հանդես է եկել հայությանը հուզող քաղաքական տարբեր խնդիրների ուշագրավ վերլուծություններով ու առաջարկություններով:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուբենի քաղաքագիտական ժառանգության ստվար մասն արդեն հրապարակված է, դեռևս կան նրա գրչին պատկանող արժեքավոր գործեր, որոնք ծանոթ չեն ընթերցողին: Դրանցից է Հայաստանի ազգային արխիվի N 1048 ֆոնդում պահվող «**Ախալցխա-Ախալքալաքի հանրապետությունը**» ուսումնասիրությունը², որը գրվել է 1924 թվականին³, երբ արդեն կազմավորվել էր Անդրկովկասի Ֆեդերատիվ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Վերջինիս կազմի մեջ մտած երեք հանրապետություններում ստեղծվել էին ազգային ինքնավար միավորներ, իսկ հայաբնակ Ջավախքը (Ախալքալաքի և Ախալցխայի գավառները), հայտնվելով Խորհրդային Վրաստանի կազմում,

*Ռուբենի այս անտիպ ուսումնասիրությունը կրում է «Ախալցխա-Ախալքալաքի հանրապետությունը» վերաբերումը: Ենթավերնագիրն ավելացվել է այն հրատարակման ներկայացրած **Խաչատուր Ռ. Ստեփանյանի** կողմից: Խմբ.: Ընդունվել է տպագրության 9.07.2013:

1 Այս հուշագրության մասին մանրամասն տե՛ս **Խաչատուր Ստեփանյան**, Ռուբենի հուշագրության պատմագիտական արժեքի շուրջ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, N 2, էջ 91-103:

2 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1048, ց. 1, գ. 71, թ. 1-20:

3 Տե՛ս նույն տեղում, թ. 14: Ավելի ուշ Ռուբենը «Դրոշակ»-ում հրատարակել է Ջավախքին սվիրված ևս մեկ հոդված, որտեղ որոշ հատվածներ և մտքեր ներառվել են սույն հոդվածից: Տե՛ս **Ռուբեն**, Ախալքալաքի պայքարը, «Դրոշակ», 1926 թ., N 1, էջ 5-11:

6 (ժԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

գրկված էին անգամ ինքնավարությունից:

Ուսումնասիրության մեջ մի շարք սկզբնաղբյուրների օգտագործմամբ⁴ Ռուբենը ներկայացրել է Ախալցխա-Ախալքալաքի համառոտ պատմությունը, որից հետո տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ առումներով հիմնավորել է երկրամասից ինքնուրույն վարչական միավոր ստեղծելու անհրաժեշտությունը: Հեղինակը գտնում էր, որ հանուն Վրաստանի տնտեսական շահերի չպետք է ոտնահարել հայաբնակ երկրամասի իրավունքները: Ավելին, տարածաշրջանային խնդիրները պետք է լուծվեն համընդհանուր շահի գիտակցման համատեքստում, որպեսզի նրանում բնակվող ոչ մի ժողովուրդ կամ պետություն չփորձի գերակա դիրք և ազդեցություն ունենալ մյուսների նկատմամբ:

Ուստի հեղինակն առաջարկում էր Ջավախքին տալ ինքնուրույն հանրապետության կարգավիճակ Անդրֆեդերացիայի կազմում: Մա հայ-վրացական հակասությունների հաղթահարման հետաքրքիր առաջարկ էր, որը չի կորցրել իր արդիականությունը նաև մեր օրերում և կարող է օգտակար լինել Ջավախքի խնդրով զբաղվող պատմաբաններին ու քաղաքական գործիչներին:

Ռուբենի ուսումնասիրության մեջ առկա վիճակագրական որոշ տվյալներ հնացած են, որովհետև այն գրվելուց 20 տարի անց ջավախքի մահմեդականները տեղահանվել են, իսկ նրանց բնակավայրերը վերաբնակեցվել են հիմնականում Արևմտյան Վրաստանից ու Կախեթից տեղափոխված վրացիներով:

Անհրաժեշտությունից ելնելով՝ հողվածին ավելացրել ենք որոշ ծանոթագրություններ:

Խաչատուր Ռ. Ստեփանյան
Պարմ. գիյր. թեկնածու

THE REPUBLIC OF AKHALTSIKHE-AKHALKALAKI

An unpublished research dedicated to Javakhk

Ruben

* * *

Այս երկու գաւառները կընկնին Հայաստանի, Տաճկաստանի և Վրաստանի միջև, Քուռի վերին հովիտում և շրջապատուած չորս կողմից բարձր լեռներով՝ կնէրկայացնին իրանից մի ինքնամիտի աշխարհ: Լինելով թուրք, վրացի, հայ ժողովուրդների միացման կէտում, ունենալով ռազմական նշանակութիւն այդ երեք ժողովուրդների համար, Ախալցխա և Ախալքալակ գաւառները ինչպէս անցեալում, այնպէս էլ այժմս կռուայինձոր է դառած Տաճկաստանի, Հայաստանի և Վրաստանի միջև: Իւրաքանչիւրը այդ պետութիւններից, քողարկելու համար իրանց աշխարհակալական ձգտումները, առաջ կրերն

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց 1, գ. 71, թ. 20:

պատմական, տնտեսական, ազգագրական պատճառներ, որոնք իբր թէ անհրաժեշտ կդարձնեն իրանց տիրապետությունը այդ շրջանի վրայ: Նրանք իրանց ոտնձգությունները արդարացնելու համար, չեն խուսափի խեղաթիւրել իրականությունը և անտեսել այդ գաւառների բնակիչների կամքը, որոնք բնաւ չեն ուզեր պատուանդան դառնալ դրանց աշխարհակալական ձգտումներին: Ախալցխա-Ախալքալակը այնքան ֆիզիքայալէ ուժեղ չէ, որ կարողանայ կռուսխնծոր լինելու վիճակից դուրս գալ, իւր իրաւունքները պարտադրելով ազգերի ինքնորոշումը ոտնակոխող իւր հարեաններին, բայց եթէ անհրաժեշտ է հայ, վրացի, թուրք ժողովուրդների բարի դրացիությունը, եթէ կցանկացուի վերջ տալ արհնահեղ բռնութեանց և պատերազմներին, անհրաժեշտ է, որ ի նկատի առնուի այդ երկրների ժողովուրդի կամքը և նրա տարրական իրաւունքները իւր հայրենիքի մէջը: Այսօր ի սասնատրի խորհրդային երկրների մէջը կկիրառուի ազգերի ինքնորոշման սկզբունքը, մոռացուած բէլժոռուներից, Տաճիկստանից սկսած մինչև փոքրիկ Օսետիան, Աջարիան, Աբխազիան ունին իրանց ինքնավարությունը կամ հանրապետությունը: Մենք, որ հին Գուգարաց և Մեսիների շառաւիղն ենք կամ նրանց ժառանգը, մենք, որ բնաւ յետ չենք մեր կոլտուրական բարձրութեամբ և շինարարութեամբ ազատություն ձեռք բերած որևէ ժողովուրդից, ինչո՞ւ կանտեսուի մեր և մեր հայրենիքի առանձնապատուկ իրաւունքները: Մենք փոքր ենք թույլ, բայց թէ ընկած լինելով Անդրկովկասի ամենագայուն վայրում, ժողովուրդների և պետութեանց բաղխման պատճառ պիտի լինի, թէ որ մեր երկիրը իւր ինքնուրոյնությունը չունենայ հաւասար Վրաստանին կամ նրա նմաններին:

Այսօր մեր հայրենիքը ընկած է վրացական լուծի ներքոյ և Վրաստանի գաւառներից մինը կկազմէ: Ահա մի քանի տարի է՝ 1920-ից սկսած, վրացական իշխանությունը կուզէ հաստատուիլ իբր տէր և տիրական: Նա իւր բռնագրաւումը կպատճառաբանէ մէնչևիկ ու բօլշևիկ վրացիների բերնով ռազմական, պատմական, տնտեսական էթնօգրաֆիկ տուեալներով, որոնցից և ոչ մինը չունին լուրջ տուեալներ և արդարացումներ: Որպէսզի անտեղի կերպով որակումներ արած չլինենք և մեր ու Անդրկովկասի խաղաղ համակեցութեան ճանապարհները ցուցադրենք, քննենք նրանց տուեալները առանձին առանձին:

Ռազմական մօտիք: Վրաստանը բաժանուած է Ախալցխա-Ախալքալակից բնական սահմանով՝ Փոքր Կովկասի Թրիալէթ, Տխրա Տխարօ, Դիառի Մատալա և այլ լեռներով, որոնց բարձրությունը 8-10.000 ոտնաչափ է: Լեռները բարձր ձինապատ և տարուայ մէջ մի երկու ամիս անցանելի: Երեք ճանապարհ կայ մեր երկրից Վրաստան անցնելու, երկուսը լեռներով. մինը Տխրա Տխարօ՝ 7700 ոտնաչափ, դէպի Բօժժում, միւսը Աբասթումանով Բուխայիա Ջէքարի լեռնանցքով 7100 ոտնաչափ բարձրութեամբ. երկուսն էլ դժուարին և միայն ամռան եղանակներին անցանելի. մի երրորդ ճանապարհ աւելի բանուկ Բուռի կիրճով դէպի Բօժժում, կարելի է ասել միակ կայսր Վրաստանի և Ախալցխայի: Աշխարհագրական այս դրությունը պարզ կապացուցանէ, որ մեր երկիրը աշխարհագրականօրէն շարունակությունը չէ Վրաստանի, այլ նրանից բաժանուած է ամուր պատնէշներով, և որ Վրաստանը պիտի իւր պաշտպանությունի համար բաւարարուէր չանցնելով հարաւ Ջէքարի և Տխրա Տխարօ լեռնանցքներից: Բայց այլ կերպ է մտածում «խնայերիալիզմ» խաղացող ներկայ Վրաստանը: Նա գիտէ, որ Ախալցխա-Ախալքալակ իւր ձեռքն ունենալով իւր առաջ կպարգուն հեռանկարներ ոչ թէ պաշտպանուելու, այլ յարձակուելու նպատակով, Բուռի հովիտով կբարձրանայ վերև մինչև Արտահան, Ղարս, իսկ Ախալքալակի վրայով կախուած է Հայաստանի վրայ: Շիրակի կենտրոնը՝ Լենինականը, ուզած պահուն իւր որսը կդառնայ: Ինկերիալիստ Ռուսաստանը այդ ձամբով ընդարձակուեց չեղածէն, Վրաստանն էլ նոյն ձամբան է բռնած: Այս վարքագիծը ակներև է թէ Հայաստանի և թէ Թիւրքիոյ համար, և բնական է, որ դրա հակազդեցությունը լինի: Թիւրքիան, որ տոգորուած է աշխարհակալական և թուրանական ձգտումներով, որի նպատակներից է Անդրկովկասի նուաձումը, պատեծ առիթները ձեռքէ չէ թողած գրաւելու Ախալցխան, Ախալքալակը, իշխելու համար Հայաստանի և Վրաստանի վրայ, հաղորդակցութեանց գծերի վրայ: Այսօր նա թէև հարկադրուած բօլշևիկների ոյժից, բարեկամ իրան ցոյց կուտայ հզօրագոյն Խորհրդային Միութեան, բայց նա կշարունակէ իւր աշխատանքները մեր երկրում՝ օգտագործելով իսլամ կրօնական բնագոյները և ազգամիջեան անտագոնիզմը խրախուսելով: Արտաքին բացասական այս ազդակը, որը պարարտ հող կզտնէ Վրաստանի աշխարհակալութեան հետևանօք, ոչ միայն հող կպատրաստէ Վրաստանի թուլացման, այլ և կքայքայէ մեր երկիրը, մեր ժողովուրդի միութիւնը և ներդաշնակությունը և մեր երկիրը ինտրիզների

ՀԱՎԵԼՎԱԾ

3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) համահայկական հանդես ՎԷՄ

բոյն կդարձնէ:

Մեր մյուս հարևան Հայաստանը, որը տեսնելով Վրաստանի աշխարհակալ ձգտումները և իր հայրենիքի վտանգուելը, չի կարող հանդուրժել Վրաստանի մեծացումը իր հաշուին: Վրաստանն ու Հայաստանը, որ կոչուած են եղել դարեր շարունակ եղբայրաբար ապրել, և այսօր իսկ առանց այդ երկու ժողովրդների բարեկամութեան անհնարին է Անդրկովկասի խաղաղութիւնը և արտաքին թշնամիների չեզոքացումը, շտրիի Վրաստանի Ախալքալակի գրաման, այսօր երկու ժողովրդները թշնամի են դառած: Երբ Վրաստան անանցանելի լեռներ անցնելով կհաստատուի Ախալքալակ, Լենինականը գրաւելու հեռանկարներով, աւելի իրաւացի պիտի համարել Հայաստանին, որը առանց լեռներ անցնելու, աշխարհագրականօրէն Հայաստանի շարունակութիւն կազմող Ախալքալակը ցանկաց գրաւել իր երկիրը ապահովելու համար:

Մատնանշելով ռազմական տեսակէտների այս վնասակար հետևանքները, մենք կկարծենք, որ մեր հաշուին չպիտի խաղան ռազմավարութիւն: Մեր բոլորին նպատակը պիտի լինի, որ Անդրկովկասը մի և ամբողջական է, և նրա ռազմական հաշիւները չպիտի սեփականութիւն լինի այս կամ այն ժողովրդի անձնական հաշիւների, այլ միմիայն ու միմիայն Անդրկովկասի ամբողջականութեան ու միութեան հաշուին: Այդ միութիւնը, և մատնանշած վնասակար ազգամիջեան պայքարները կվերացուի միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասի բոլոր ժողովրդները և ի մասնաւորի մենք լինենք մեր երկրի տերը և հաւասարազօր անդամը Անդրկովկասի միւս ժողովրդների կողքին: Երբ մեր հայրենիքը կգոհաբերուի Վրաստանի ռազմական ցնորական և իրան իսկ վնասակար հաշիւներին, գարմանալի չպիտի լինի, եթէ մենք չուզենանք այդ թէ իրանց և թէ մեզ վնասակար հաշիւներին պատուանդան լինել, չպիտի գարմանալ, որ մեր մէջ Վրաստանի հէգեմոնիայից զրգուած, բռնութեան տակ իսլամութիւնը ընդունած Գուգարաց և Մեսխերի ժառանգները, այսօր ևս ցանկանան բաժանուել Վրաստանից, ակամայից պատուանդան դառնալով թուրք աշխարհակալութեան, և կամ ազգաբնակչութեան մեծամասնութիւն կազմող հայերը գերադասեն Հայաստանի իշխանութիւնը, քան Վրաստանի: Մեր երկրի գրաւումով Աքիլեսեան խոցելի կրունկ է ձեռք բերած Վրաստանը, որ նրան կառաջնորդէ անդունդ: Թէ մեր երկրի, թէ Վրաստանի և թէ Անդրկովկասի միութիւնը, ներդաշնակութիւնը ձեռք բերելու համար անհրաժեշտ է մեր կառավարիչ ակադեմիան Վրաստանի գերիշխանութիւնից, տալ նրան ազատութիւն և իւր ազատ կամքով միանալու Անդրկովկասի ֆէդէրատիոնին իբր նրա հաւասարազօր մէկ անդամ: Դրանով կվերանայ վրացական իմպերիալիզմը, բայց ձեռք կբերուի Վրաստանի հարաւի սահմանների պաշտպանութիւնը մեր երկրի կրծքով, Թիւրքիոյ սաղրանքներ հող չպիտի գտնեն և անխաբոյսալ Անդրկովկասեան ոյժը պիտի գտնեն թշնամիները իրանց առաջ:

Հայաստանը կկորցնի էտնօգրաֆիլ մի հայկական գաւառի միացումը Հայաստանին, բայց պիտի շահի, քանի որ մի պատուար կգտնի Վրաստանի և Թիւրքիոյ ներխուժմանց առաջ, վէճի առարկան պիտի վերանայ իւր և Վրաստանի միջև, և ներդաշնակութիւնը Անդրկովկասի աւելի քան հաւանական լինելով, թէ իւր և թէ Անդրկովկասի սահմանների պաշտպանութիւնը աւելի ամուր հիմքեր պիտի ստանան:

Անդրկովկասի և ի մասնաւորի Վրաստանի կամ Հայաստանի ռազմական մասնակի հաշիւները անտեղի և անմիտ կգտնենք, քանի որ Անդրկովկասը մէկ է և մի ֆէդէրատիոյ պետութիւն կկազմէ. նրա սահմանների պաշտպանութիւնը ոչ թէ սեփականութիւնը պիտի լինի այս կամ այն ժողովրդին առանձին-առանձին վերցրած, այլ ամբողջին միասին վերցրած, իսկ դա հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասի ամեն մի մասնիկը իւր սեփական հաւասար տեղը ունենայ ֆէդէրատիոնի մէջը, երբ ամեն միւր իւր հայրենիքը իրան համարէ և նրա պաշտպանութիւնը անհրաժեշտ իւր ազատութեան և իւր կեանքի պահպանման համար: Այսօրայ կացութիւնը այդ գրաւականը չի տայ: Մեզ խորթ է Վրաստանը և նոյն իսկ թշնամի, մեր երկիրը մերը է, մեր կեանքը հանձնուած է Վրաստանի բարեացակամութեանը, որի արդիւնքը մենք տեսած ենք Թիւրքիոյ ներխուժման պարագային՝ Ախալցխայի, Ազդոռի պաշարման դէպքում, կամ Բակուրիանի ու Ծալկայի լեռներում⁵:

5 Հեղինակը նկատի ունի 1918 թ. ջավայքյան դեպքերը, երբ թուրքական բանակը ներխուժեց Ախալցխայի և Ախալքալակի գավառներ: Վրաստանի կառավարութիւնը ոչինչ չարեց երկրամասի բնակչության ինքնապաշտպանութեան օժանդակելու համար: Ախալցխայի գավառում ինքնապաշտպանութիւնը կազմակերպեց Ախալցխայի քաղաքապետ Ջորի Ջորյանը՝ առանց

Պատմական առարկությունները: Վրաստանը որպեսզի արդարացնէ իւր ազգերի ինքնորոշման սկզբունքի ոտնատակ անելը և մեր հայրենիքի բռնագրաւումը, կուզէ ապացուցանել, որ այդ գաւառները ի վաղուց անտի եղած են Վրաստան: Նա վկայութեան կկանչէ հին մատենագիր, և Քարտլիս Տիտվրեբայից⁶ օրինակներ կբերէ և որ Թամար⁷ թագուհին հաստատուած էր հռն, որ Կիւրիօս⁸ եպիսկոպոսը ջաւախքեցի է, և այլն: Մենք պատմական փաստերը քննելու կամ հերքելու մտադրութիւնը չունենք: Մենք կընդունենք, որ երբեմն Թամարաները ոչ միայն տիրած են մեր երկրին, այլև անցած են աւելի հեռուն, մինչև Արարատ, մինչև Վան և Ալալաթ, համաձայն ենք, որ Կիւրիօսը ջաւախքեցի է, բայց դրանք կընդունենք մեր երկրի պատմութիւնը, մեր հայրենիքի պատմական էպիգոդները, մեր փառքը կամ մեր անպատութիւնը: Պատմագիրներով ապացուցանել, որ մեր հայրենիքը եղած է Վրաստանի օրօրանը շատ սայթաքուն է, քանի որ իրանք վրացի պատմագիրները չեն պնդէ, թէ եղած է Վրաստան, այլ Վրաստանի սահմաններին միացուած գաւառներ, բացի դրանից նոյն պատմագիրները կվկայեն, թէ Հայաստանի սահմանների մէջ ընկած [է] եղել տարբեր ժամանակներում մեր հայրենիքը: Նոյն ձևով առաջնորդուելով հայերն էլ կարող են քրքրել իրանց պատմագիրների էջերը և նոյնքան յամառութեամբ պնդել, որ Հայաստանի մասերն են մեր հայրենի գաւառները: Վախուշտայի դիմաց կայ Միվսէս Խորենացին, Բիւզանդացին և այլն. պատմութիւնից վկայութիւն բերելու համար Վրաստանը չպիտի ի նկատի առնէ պատմական մի դէպք, մի կարճ ժամանակաշրջան, այլ այդ երկրի ամբողջ անցեալը անաչառ կերպով: Այդ դէպքում ոչ մի վրացի չի կարող համարել մեր հայրենիքը իւր օրօրանը:

Մեր հայրենիքի մասին կյիշատակէ Վախտանգ Ե-ի պատմագիրը (Քարտլիս Տիտվրեբա), որ նա ժառանգութիւն էր տրուած Քարթլեոսի թոռ Մցխետոսի որդուն՝ Ջաւախտին, բայց այս աւանդութիւնը կհերքուի նրանով, որ Ջաւախտս գոյութիւն չէ ունեցած, քանի որ ջաւ կնշանակէ գարի, և գարի առատ բուննելու համար Ջաւախքը կկոչուի Ջաւախք, ըստ Շոպէնի⁹ բացատրութեան: Այդ կհերքուի վրացի մի այլ պատմագիր Վախուշտայի¹⁰ կողմից, որ կասէ Հայոսի որդիների սեփականութիւնն էր, որ կհամապատասխանէ Միվսէս Խորենացի պատմագրի ասածին, թէ Շիրակի Շարայի որդի Գուշարին ժառանգութիւն տրուած էր: «Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կարգէ կողմնաւկայ հիւսիսոյ գմեծ և զհօր ազգն, նահապետութիւն անուն կարդայ բոլեշխն Գուգարացոց»: նոյնը կհաստատէ և Ասողիկ պատմագիրը (Խորենացի, գիրք Բ, գլ. Ը. Ասողիկ, 39 երես): Մինչ Արշակունեաց հաստատումը Հայաստանում քիչ տուեալներ կան մեր երկրի պատմութեան մասին: Միայն յայտնի է, որ մեր երկրի ամենահին մայրաքաղաքը, ներկայ Ծունդա¹¹ գիւղը, առաջ կկոչուէր «Հուր», բնակեցուած էր Մարգերով, և երկիրը

վրացական օժանդակութեան: Իսկ Ախալքալաքի գավառի ժողովուրդը մի քանի բնակավայրերում հերոսական դիմադրություն ցույց տալուց հետո արտագաղթեց Բակուրիանի և Ծալկա: Այստեղ Վրաստանի իշխանությունները արգելեցին ջաւախքահայ գաղթականների տեղաշարժը դեպի Վրաստանի խորքերը: Բակուրիանիում և Ծալկայում ապաստանած հայ գաղթականների կէտը, շուրջ 40000 մարդ, գոհ գնաց սովին և համաճարակներին:

6 «Քարթլիս ցխտվրեբա» – «Քարթլի կյանքը» երկի հեղինակը 11-րդ դարի վրաց պատմիչ, եպիսկոպոս **Լեոնտի Սրովելին** է (վրաց. լეონტი ძროველი): Լեոնտի Սրովելու երկից Հայաստանի պատմությանը վերաբերող հատվածները թարգմանվել են հայերեն Մելիքսեթ-Բեկի կողմից և հրատարակվել «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ժողովածուում (Եր., 1934, էջ 140-184):

7 **Թամարը (Թամար Մեծ)** Վրաստանի թագուհին էր 1184-1213-ին, վրաց Բագրատունիների ականավոր ներկայացուցիչներից: Նրա օրոք Վրաց թագավորությունը հասել է հզորության ու ծաղկման գագաթնակետին: Պետությանը և թագուհուն նեցուկ են դարձել Սարգիս Ջաքայայանը (Սարգիս Մեծ) և նրա որդիներ Ջաքարե Բ Մեծն ու Իվանե Ա-ն:

8 **Կյուրոսը** 7-րդ դ. սկզբին վրաց եկեղեցու առաջնորդն էր: Որդեգրելով ընդգծված բյուզանդամետ դիրքորոշում՝ նա 608-ին խզել է վրաց եկեղեցու ավանդական կապը Հայոց եկեղեցու հետ և ընդունել քաղկեդոնականություն:

9 **Իվան Շոպեն** (1798-1870), ֆրանսիացի ազգագրագետ, պատմաբան:

10 **Վախուշտի Բազրատիոնի**, (1696-1757), վրաց աշխարհագրագետ, պատմաբան: Վրաստանի արքայազն Վախթանգ 6-րդի արտասանական որդին: Վախուշտիի ուսունասիրություններում հարուստ տեղեկություններ կան Հայաստանի հյուսիսային շրջանների, այդ թվում՝ Ջավախքի մասին:

11 Ներկայումս գյուղը կոչվում է Մուլդա (Ախալքալաքի շրջանում), որի տարածքում գտնվում են Ծունդա մայրաքաղաքի ավերակները և կիսականգուն բերդը:

կկոչւէր Մարգաստան¹², որին տիրեցին վրացիք Քրիստոսից առաջ մինչև Փարսըմանի վրաց թագաւորի ժամանակները 72-87 թուերին, և որից խլեց Երուանդ հայոց թագաւորը և «Ծուռդան» կամ «Հուր» քաղաքի անունը փոխելով՝ անուանեց Քաջաց տուն կամ Քաջիսցիխե: Վաղարշակ Ա-ի¹³ ժամանակ Քրիստոսից առաջ Ախալցխա, Ախալքալակ գաւառները կմտնէին Գուգարաց բղէշխութեան մէջ, որը առանձին նախարարապետութիւն էր հայերին ենթակայ մինչև Արշակ Բ-ի իշխանութիւնը:

Ո՛վքեր էին Գուգարաց երկրի բնակիչները*, ի՞նչ յարաբերութեան մէջ էին Հայաստանի վասսալ Գուգարաց բղէշխները Հայաստանի մի կողմից, իսկ միւս կողմից բնիկ ժողովրդների հետ, պարզ չէ. միայն ըստ աւանդութեան (**Таким образом**, "Источники грузинских летописей"), այդ երկրներում հայերէն կխօսէին, քանի որ Նունէ առաքելաւորին, որ Քրիստոնէութիւն տարածեց Վրաստանում, անցնելով Տափառասան լճի մօտով, ձկնորսների հետ կխօսէր հայերէն լեզուով: Բայց ըստ Մառի, այդ երկրի բնակիչները Մեսխերն էին, որ հարաւից եկան հաստատուեցին Ախալցխա, Ախալքալակ, երևի ձուլելով իրանց մէջ Մարգերին, և ի վերջոյ ընդարձակուեցին մինչև Սվանէթիայ, որի պատճառով վրացիք կկոչեն Սոմէխ, որ ի վերջոյ հումանիշ դառաւ Հայ անուն: Հետագայ հայ, վրացի պատմագիրները կհաստատեն, որ մեր երկրի բնակիչները եղել են Մեսխերը: Ըստ երևոյթիս Գուգարաց բղէշխութեան հիմքը և ոյժն էլ կկազմէին Մեսխերը: Այդ ժողովուրդը վասսալ էր Հայաստանի, մինչև Արշակ Բ հայոց հետ էին, բայց ապստամբեցին և անցան վրաց կողմը. երևի չուզեցաւով հպատակ լինել հայերին: Բայց Պապ թագաւորի սպարապետ Մուշեղը կնուաճէ այդ երկիրները, ըստ Բիւզանդ պատմագրի հետևեալ ձևով կնկարագրէ այդ նուաճումը. «Ապա յաաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային և նեղէր գնա մեծապէս, և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զագգս նախարարացն... և զբղէշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր և թափէր զամենայն գաւառն և առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր, և զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ ընդ երկրին Հայոց և ընդ երկրին Վրաց, որ ինքն է մեծ գետն Կուր»: Այս հատուածից կհասկացուի, որ սահմանային վեճեր դեռ Պապ թագաւորին ժամանակները եղել են, և այն ժամանակ թէև հայերի ձեռքն էր, բայց վրացական մրցակցութիւնը և տիրելու տենչերը չէին պակասեր և տեղացի ժողովուրդը, թէ իշխանները չէին տաւանուի առաւելագոյն ազատութիւնը ձեռք բերել երբեմն վրաց, երբեմն հայոց վրայ հենուելով՝ նայած նրանց մրցակցութեանց և նրանց ոյժին: Բայց Ե դարում մեր հայրենիքը ըստ երևոյթիս կընկնի վրաց իշխանութեան ներքոյ, Հայաստանի թուլացման հետևանք: Այդ պիտի ենթադրել Խորենացու Աշխարհագրութիւնից:

Հայաստանում Բագրատունեաց իշխանութիւնը հաստատուելով Սմբատ Ա ըստ Յովհաննէս պատմագիր կաթող. (գիրք Բ, գլ. Ժ) հայերը կը գրաւեն ամբողջ Գուգարքը. «Եւ անտի դարձեալ երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց և զայնս ևս ամբոցս իւրոյ տէրութեանն առ հասարակ յինքն գրաւէր նուաճէր»: Դրանից կերևայ, որ վրացոց իշխանութեան ենթակայ, կամ բոլորովին անկախ էր Գուգարքը, որ հայերը գրաւեցին և նաճեցին:

Ժ-երորդ դարում Հայոց Կիւրիկեան թագաւորները կըաժանեն Գուգարքը իրանց և

12 Ոմանց կարծիքով Ծուռդա քաղաքը գտնվել է Մարգաստան գյուղի (այժմ Ասայինձայի շրջանի Թմոզվի գյուղը) տեղում:

13 Վաղարշակ I (ծն. և մահվան թթ. անհայտ), Հայոց ավանդական թագաւոր: Հայոց պատմիչները Վաղարշակին համարում են Պարթևաց Արշակունի թագաւոր Արշակ Մեծի կամ Սիհրդատ I Մեծի (մ.թ.ա.171-138) եղբայրը: Վերջինիս օգնությամբ 31 տարի գահակալելով Հայաստանում մայրաքաղաքն ու գահանիստը դարձրել է Մծրինը: Մովսէս Խորենացին առասպելական Վաղարշակին է վերագրում վարչական, քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային բազմաթիվ բարենորոգումները: Վաղարշակի կարգադրությամբ է արտի քուրմ Մար-Պրաս Կատինան բարեկոյսան աղբյուրների հիման վրա գրել Հայոց Պատմութիւնը: Վաղարշակի պատմականությունը կասկածի է ենթարկվել XIX դ. 2-րդ կեսից և տակաւին մնում է գիտնականների տարակարծությունների ու վեճերի առարկա: Ուսումնասիրողներից ոմանք Վաղարշակին փորձել են նույնացնել Տրդատ I-ին:

*Զավախքի հնագույն բնակիչների մասին Ռուբենի տեղեկություններն արտացոլում էին իր ժամանակի պատմագիտության մեջ անկա տեսակետները, որոնցից շատերը վաղուց հերքվել են հայագիտության կողմից: Նշված հարցերի վերաբերյալ արդի հայ պատմագիտության գնահատականները տե՛ս Բ. **Հարությունյան**, Մեծ Հայքի Գուգարաց աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, N 2, տես նաև՝ **Աշոտ Մելքոնյան**, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր. , 2003:

վրացոց միջև, որով Ջաուխքից սկսած կանցնի վրացոց: Վրաց Բագրատ Գ թագաւորը 980-1044-ին կիսմանէ Ախալքալակը, իսկ թոռը՝ Բագրատ Դ կշինէ բերդը: Իսկ տեղացի հայ իշխաններ Բագրատ և Գուրգէն Թմուկլի (Թըմուկ) բերդում բանտարկելով կմահացնէ: Ըստ երևոյթին տեղացի ժողովուրդը համակերպած չէր իրանց հայ-վրացական համաձայնութեան Գուգարքի բաժանման մասին, և դրա համար տեղական իշխանները կքաւեն իրանց ազատասիրութիւնը Թմուկլի բերդում և կմահանան:

Բայց ԺՄ դարում 1064 թուին Մատթէոս Ուռհայեցիին կպատմէ. «յարուցեալ Մուլթանն Ալփապան, ահագին բազմութեամբն իւրով մտաւ յաշխարհն Վրաց և իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաուխս և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն ոչ կոչի Ախալ. և առ հասարակ գամենայն քաղաքն սրով կտտորեաց զայր և կին՝ անողորմ... և անհամար անակունս և աղջկունս տարաւ ի Պարսիկս ի գերութիւն»:

ԺԿ դարում թաթարների արշաւանքից Վրաստանը թուլացած էր, դրանից կ'օգտուին Ախալցխա-Ախալքալակի բնիկ ժողովուրդը և թէև կորցրած իրանց իշխանները, բայց տեղական ազդեցիկները ինքնագլուխ կկառավարեն երկիրը, իսկ ԺԴ դարի առաջին կէտում Ախալցխացի Սարգսին կյաջողի Ախալցխա-Ախալքալակ միացեալ շրջանի անկախութիւնը ճանաչել տալ վրաց թագաւորների կողմից իբրև անկախ այթաբեկութիւն (հայրիշխանութիւն):

ԺԵ դարում Ախալցխայի այթաբէկ Աղբուտան հրատարակում է Աղբուտայի օրէնքները: 1484 թուին այս փոքրիկ անկախ պետութիւնը նոր դժբաղտութիւն կունենայ, Պարսից Եակոբ շահը կարշաւէ այթաբեկութեան սահմանները, ըստ պատմագրի մէլիսինները չեն կարողանում պաշտպանել Ախալքալակ. առնում է բերդը, բոլոր երևելի մէլիսիներին և քաղաքի բնակիչներին գերի է տանում և գնում պաշարում Ախալցխան: Բայց այդ աղէտները անցնելով այթաբեկները թշնամիներին յետ վանելով կման անկախ. մի քանի անգամ յետ կըմղեն պարսիկների արշաւանքները և Ասայինջայի մոտ 1624-ին Մծուրան Գէորգ Սահակաձէն կջարդէ վերջին անգամ պարսիկներին: Բայց 1625-ին սերքին դաւադրութեան հետևանքը կքայքայուի այթաբեկութիւնը և երկրի ժողովրդի միութիւնը, այթաբէկ Մանուչարը կսպանուի իւր եղբայր Բէկայի ձեռքը. կփախչի Պօլիս և իսլամութիւն ընդունելով կվերադառնայ իբրև այթաբէկ. նրա օրինակը կվարակէ, ջաւախքեցի քահանա Պէրուադիս նոյնպէս կվազէ Պօլիս, իսլամութիւն կընդունէ և կվերադառնայ իբրև Ջաւախքի այթաբէկ: Մի կողմից երկիշխանութիւնը, միւս կողմից իսլամութիւն ընդունելը արդէն քայքայած էր երկիրը, իսկ երրորդ կողմից Վրաց և Իմէրէթու թագաւորների թշնամութիւնը, որոնք միացած թուրքերի հետ կընկճին այթաբեկութիւնը, բայց այթաբեկութիւնը և իւր գաւառները չեն անցնի վրացոց ձեռքը, այլ թուրքերը ընկճելով վրացոց օգնութեամբ կդարձնեն Թիւրքիոյ մէկ փաշայութիւնը (Ախալցխա): Վախուշտան կպատմէ, որ Խրթըզ ենիչեքիները կենտրոնատեղի էր դառնալով, իսկ գաւառները՝ աւազականոց:

1772-ին վրացիք կուզեն իրանց սխալը ուղղել կամ վերականգնել Ախալցխա-Ախալքալակի անկախ այթաբեկութիւնը և կամ գրաւել, դուրս քշելով թուրքերին, բայց անօգուտ կանցնին Իմէրէթու թագաւոր Սողոմոնի և Կախետու թագ. Հէրակլէսի փորձերը, կպաշարեն Ախալալակը, բայց չեն յաջողի:

1807-ին ասպարէզ կուզան Ռուսները. Գուրկիչ անյաջող փորձ կանէ իլել Ախալքալակ, բայց մեծ զոհեր տալով յետ կնահանջէ:

1810 - Ռուսական զօրքերը Պաուլիչի առաջնորդութեամբ կջարդեն վրաց Ալեքսանդր թագաժառանգին և պարսից ու տաճկաց միացած ոյժերին, բայց բերդը կմնայ թշնամու ձեռքը:

1811-ին Կոտլարնակին կառնէ բերդը, բայց կվերադարձուի թուրքերին:

1828-ին Պասկեիչը կառնէ Ախալքալակ-Ախալցխան Կարսի անկումից յետոյ և Ադրիանապոլսի դաշնագրով կմնա Ռուսներին:

1828-ից 1917 թուականը Ռուսական գաւառներ են դառնում երբեմն միացած Ալեքսանդրապոլի, երբեմն միացած Թիֆլիսի նահանգին:

1917-1918-ին Ախալքալակ-Ախալցխան, օգտուելով Ռուսների հեռացումից, կկառավարուին իրանց ազգային խորհրդներով, Ազդոռում մահմեդականների, Ախալցխայում իսառն քրիստոնէայ և մահմեդական, քաղաքայետ Ջորի Ջորեանի գլխաւորութեամբ, իսկ Ախալքալակում հայոց ազգային խորհրդի: Մրանք մի կողմից կկռուին վրաց ներխուժումի, միւս կողմից թուրքաց ներխուժումի դէմ: Վրացի մենչևիկ իշխանութիւնը նոյն դերը կատարեց, ինչ վրացի թագաւորները 1637-ին, օգնելով թուրքերին: Վէհիք փաշայի զօրքերը մտան Ախալքալակ և Ախալցխա, բայց կանգնեցրին իրանց աջակցող

ՀԱՎԵԼԿԱՑ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հոյիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

վրացի զօրքերին Ազդոռի դիմաց և վերականգնեցին Ախալցխայի փաշայությունը: Երկրի բնակիչները ապաստանեցին Վրաստան, բայց վրացիները թշնամաբար ընդունեցին. 30.000-ի չափ կոտորեցին սովով և ցրտով:

1918-ին թուրքերը հեռացան, վրացիք շտապեցին թողած այդ գաւառները մտնել: Տեղական ժողովուրդը իբրև թշնամի բանակ ընդունեց վրացիներին: Նա օգնության կանչեց Հայաստանին, բայց նա դանդաղեց դրական օգնության հասնել, թէև հայ-վրացական պատերազմի նպատակներից դարձրեց մեր երկրի Հայաստանին կցելը:

1920-ից մի քանի անգամ ինքնորոշման պահանջը ներկայացուեց թէ Անդրկովկասի հանրապետությանց և թէ բոլշևիկների առջև, բայց ցարդ անլսելի է մնացած մեր պահանջը և մենք կգտնուենք Վրաստանի իշխանության ներքոյ:

Ահա այս է մեր երկրի իսկական պատմության սխեման: Սրանից առած փաստեր կարելի է հանել ինչպէս Վրաստանի, նոյնպէս և ուրիշ պետութիւնների համար: Եթէ Վրաստանը Ժ, ԺԱ և ԺԲ դարերու իւր տիրապետութիւնը ապացոյցն է իւր տիրապետության հաստատող, ինչո՞վ կարելի է հերքել հայոց ապացոյցները նախ քան Քրիստոսը, և նրանից յետոյ Ա, Բ, Գ, Դ դարերում և կամ յետագային մինչև Ժ դարերը: Բայց պատմականօրէն պակաս ապացոյցներ չունեն և պարսիկները, և արաբները, և թաթարները, և թուրքերը, որ նախավերջին տիրապետողն են եղած, և ռուսները, որի տիրապետության ականատեսներն ենք: Երբ ամեն միւր փաստ բնուելով այն, որ իրանք ժամանակին եկած են և տիրած, ապա ուրեմն իրանց հայրենիքն է մեր երկիրը, այդ պարագային դժուարին պիտի դառնար Վրաստանի վրացոց հայրենիքը լինելը, քանի որ ան ևս բազմիցս ընկած է եղել մեր ստրկական վիճակին հայերի, մեայիների լուծից սկսած մինչև թուրքիւնը, պարսիկիւնը և ռուսիւնը: Մենք չենք ժխտել պատմական փաստերը: Այո, մեր երկրին նուաճած են և վրացիները, բայց կժխտենք այն, որ երբևէ մեր երկիրը ինքը միացել է Վրաստանին իբր հայրենի երկրի մի անբաժան մասը: Ընդ հակառակը մենք միշտ խորշած ենք Վրաստանից և աւելի յաճախ հակառակորդ նկատած, ինչպէս ցոյց կուտայ ինքը պատմութիւնը: Եթէ եզրակացնելու լինենք պատմական տուեալները՝ հետևեալ պատկերը կտանանք:

- 1) Քրիստոսից առաջ մեր երկրի պատմութիւնը անորոշ է. երբեմն վրաց, երբեմն ինքնիշխան, երբեմն հայոց իշխանութեան տակ է ընկած:
- 2) Մոտ 4 դար՝ իբր Գուգարաց երկրի գաւառները, ինքնավար բոլեշխութիւն է եղած, Հայաստանի հովանու ներքո, իբր մի պատուար Պոնտոսի և «ճիւսիսական աւազակաբարոյ ժողովուրդների հանդէպ»:
- 3) Երբ Հայաստանի Արշակ և Պապ թագաւորների կենտրոնաձիգ քաղաքականութիւնը կլինի, մեր երկիրները կապտամբեն՝ յետուելով վրացոց վրայ, բայց կընկճուին:
- 4) Ե դարում իբրև բոլեշխութիւն կենթարկուին Վրաստանին:
- 5) Հայ Բագրատունեաց հարստութեան ժամանակ կմիացուին Հայաստանին մինչև Ժ դարը:
- 6) Կիրիկեան իշխանութեան ժամանակ Գուգարքը բաժանուելով երկու մասի, մեր երկիրը կընկնի վրացոց լուծի տակ մինչև ԺԳ դարը, ուրեմն մօտ երեք դար:
- 7) Տասներեքերորդ դարից մինչև տասնեօթերորդ դարը մօտ 4 դար կլինենք անկախ:
- 8) Վրացիների և թուրքերի միացեալ ոյժով մեր անկախութեան վերջ կտրուի և կընկնի Թուրքաց լուծի տակ մինչև Ռուսների գալը 1828. մօտ երկու դար:
- 9) 1828-ից 1917. մօտ մի դար Ռուսական լուծի ենթակայ:
- 10) 1917-18. մօտ մի տարի ինքնիշխան:
- 11) 1918-ից յետոյ Վրաստանի լուծին տակ:

Կտեսնենք, որ այդ 20 դարերի ընթացքում մեր երկիրը անուանապէս ընկած է Վրաստանի մէջը մինչև երեք դար, որի դիմաց 8 դար մեր հայրենիքը եղել է բոլորովին անկախ, կամ ինքնավար, մնացած ժամանակները հայոց, թուրքաց, ռուսների և կարճ ժամանակներով պարսից և արխազաց ենթակայ է եղած:

Եթէ պատմութիւնը պիտի ապացոյց բերուի, դա ի վնաս Վրաստանի կլսօսի, նրանից պիտի ուսանել այն, որ մեր հայրենիքը գերազանցօրէն ինքնատիպ ազատասէր ժողովուրդ է եղած, որ թէև փոքրիկ, բայց կարողացել է տապալել վրացոց լուծը և դրանից անմիջապէս յետոյ ապրել անկախ 4 դարու չափ: Երկրորդ, որ նա հանդուրժել է Հայաստանի հովանաւորութիւնը այն չափով, որ չափով նա յարգած է իւր ինքնուրոյնութիւնը և դաշնակցած արտաքին թշնամիների դէմ: Երրորդ, որ աղէտ է եղել թէ Վրաստանի և

թէ Հայաստանի համար, այդ երկրի անկախութեան ոչնչացումն է, և վնասակար է վրացի և թուրք համագործակցութիւնը մեր երկրների բաժանելու համար, ինչպէս 1637-ին վրացի թագաւորների և թուրք սուլթանների գործակցութիւնը հետևանք ունեցաւ թուրք Ախալցխայի փաշայութեան ստեղծման, նոյնպէս և ժողովրդային, Ռամաշուխու միացումը Վեհիբ փաշային, արդիւնք տուեց Բաթումի դաշնագրին և Ախալցխայի և Ախալքալակի Թուրքիոյ միացումը:

Պատմութեան այդ դասերը օրինակ առնելով՝ մենք եզրակացրած ենք, որ Հայաստանի համար անհրաժեշտ է մեր անկախութիւնը ընդդէմ հիւսիսական ժողովրդների ոտնձգութեանց, Վրաստանի համար անհրաժեշտ է ընդդէմ թուրք իշխանութեան ներխուժման, իսկ մեզ համար անհրաժեշտ է մեր հարևանների հետ հաշտ ապրելու և մեր կենսքն ու իրաւունքները յարգել տալու և մեր յառաջադիմութեան համար ամեն կողմերով:

Տարածութիւնը: Մենք տեսանք վրացոց պատմական փաստարկութեանց թոյլ կողմերը, երևի այդ ի նկատի առնելով նրանք ծաղրանքի առարկայ դարձրած են եղել մեր ինքնավարութեան և անկախութեան ձգտումները՝ մի այլ առարկութիւն մէջ գցելով, որ ձեր երկիրը ծիծաղելիօրէն փոքր է. «Եթէ ամեն մի գիւղ և թաղ անկախութիւն ուզենայ, աբսուրդի կհասնէ անկախութիւնը». մտաւորապէս այդ խօսքերը կասուէին Ռամաշուխու բերանով Անդրկովկասեան Մէյմում: Բայց տեսանք պատմութիւնից, որ այդ «աբսուրդի» հասած փոքրիկութիւնը 4 դար անկախ կենաց է ունեցած և յաջող պայքարած Վրաստանի դէմ: Եթէ մենք փոքր ենք տարածութեամբ, բայց համեմատաբար ատելի աբսուրդի մօտիկ փոքրիկութիւն է Վրաստանը Ռուսաստանի հանդէպ, որին դէմ պայքարելով իւր անկախութիւնը կուզէ: Մենք գիւղ և թաղ չենք համարէ 50.000 քիլօմէտրանոց Վրաստանին 16.000.000 միլ. քառ. քիլ. Ռուսաստանի հանդէպ, ինչպէս և 5.000 քիլ. Ախալցխան և Ախալքալակը ոչնչութիւն չէ Վրաստանի հանդէպ: Բարեբախտաբար բօլշևիկ իշխանութիւնը երկրի տարածութեան փոքրութիւնը հիմք չի բռնէ ազգերի ինքնորոշման ձգտումը խեղդելու համար: Այսպէս թէ այնպէս մեր երկիրը ունենալով 5308 քառ. քիլ. տարածութիւն, նա մեծ է քան Աջարիան¹⁴, Օսէթիան¹⁵, Ղարաբաղը¹⁶, հաւասար է Նախկրային¹⁷ և մի քիչ փոքր է Աբխազիայի հանրապետութիւնից: Ըստ երկրի մեծութեան ուրեմն նա կարող է նոյնքան իրաւունքներ ունենալ, որքան վերոյիշեալները:

Ազգաբնակչութիւնը: Այս ևս աննշարելի քանակ չէ, մօտ 21 թեմում (գիւղայնաբերում), 340 գիւղերում և երկու քաղաքներում այժմեան հաշուով 175.000 ազգաբնակչութիւն, իսկ 1913 թուի հաշուով 192.000 ազգաբնակչութիւն կար, բաւական խիտ բնակչուած 5308 քառ. քիլօմէտրի վրայ. մօտ 40 մարդ մի քիլօմէտրին: Այս թուերը արհամարհելի չեն: Աւելի մեծ է քանակով, քան Անդրկովկասի ինքնավար շրջանները և հանրապետութիւնները, մեծ է քան Նախկրայը, Ղարաբաղը, Օսէթիան, Աջարիան և համարեա հաւասար Աբխազիային: Ուրեմն ազգաբնակչութեան թիւը արգելք չէ նրա ինքնորոշման:

Տնտեսականը: Ախալցխա-Ախալքալակ Վրաստանին միացնելու ազդակներից կհամարուի Վրաստանի հողագուրկ լինելը և տնտեսապէս կապուած լինելու մօտիկները, և երկրորդ որ նրա նիւթական կարողութեան չափար շատ չնչին է ինքնավար դրութիւն ստեղծելու համար: Այս երկրորդ պատճառը ըստ էութեան մի դիմակ է, ծածկելու համար առաջին բուն նպատակը: Ուստի ատելի կանգ կառնենք առաջին հարցի վրայ, որով և երկրորդ պատճառը կլուսաբանուի:

Վրաստանը սկզբում ասացինք, որ «իմպերիալիզմ խաղալով» կձգտի ընդարձակուել դէպի հարաւ. այդ ձգտումը իրականացնելու համար նա կջանայ իրա բռնագրաւած գաւառներում հող գտնել և տեղաւորելով հողագուրկ Վրաստանի գիւղացիութեան՝ երկու նպատակի միաժամանակ հասնել: Վրացի հողագուրկներին հող գտնել և Ախալքալակ-Ախալցխան վրացացնել՝ տեղացիներին գցելով փոքրամասնութեան մէջ:

Մենք հակառակ չենք, որ աշխատատր հողագուրկ վրացին հողատէր լինի, բայց դա չպիտի լինի ի վնաս տեղացի ժողովրդեան: Եթէ մեր երկրում մենք ինքներս հողագուրկ ենք, այդ պարագային առաջին հերթին պէտք է մտածել, մեր հողերը մեզ յատկացնել:

14 Աջարիայի Ինքնավար Հանրապետության տարածքը 2,9 հազար կմ² է:

15 Հարավ-Օսէթական Ինքնավար Մարզի տարածքը կազմում էր 3,9 հազար կմ²:

16 Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը կազմում էր 4,4 հազար կմ²:

17 Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքը կազմում է 5,5 հազար կմ²:

ՀԱՎԵՆԿԱԾ

հոյիս-մեպրեմբեր, 2013
Ե (ԺԵ) քաղի, թիվ 3 (43)

ՎԷՄ համահայկական հանդես

Այսպիսի-Այսպիսի ընդհանուր տարածությունը 503.800 հեկտար է. ի նկատի առնելով, որ մօտ 150 քիլ. տարածություն լճերով են ծածկուած, մօտ 100.000 հեկտ. անտառներով, և ամբողջ երկիրը բացի Այսպիսի լեռնադաշտից կներկայացնէ 7-11.000 ոտնաչափ բարձրութեամբ լեռներ և անդնդախոր ձորեր և քարքարոտներ, չափազանցություն չի լինի, որ տարածութեան 40 %-ը համարենք կորցուած և անայտը: Փաստօրէն 200.000-250.000 հեկտար օգտագործելի հողեր պիտի համարել, իսկ եթէ ազգաբնակչութիւնը համարենք 175-200.000, ուրեմն 1 հեկտարից 1,5 հեկտար անձ գլուխ օգտագործելի հող կհասնի: Բայց թուերը որպէսզի վիճելի չհամարուին, չնայելով, որ Այսպիսի-Այսպիսի անտառները 2-րդ անգամ տարածութիւններ ունեն, իր հողը անելի քիչ արդիւնատու է քան Թիֆլիսի և Քութայիսի սահանգների հողերը, և չնայելով, որ միմիայն գարին է գլխատու մշակոյթային առարկան Վրաստանի միւս վայրերի ծխախոտի, բրնձի, բամբակի, թէյի և այլ հատոյթաբեր նիւթերի դիմաց, համարենք հողի որակը և համարենք միւս վայրերի հետ. վերցնենք տարածութիւնները և ազգաբնակչութեան թիւը ըստ խորհրդային տուեալների 1927ի և գտնենք թէ անձի գլուխ որքան հող կհասնի: Ըստ վերջին Վրաստանի շրջանների բաժանման, Խորհրդային Վրաստանը կբաժանուի հետևեալ գաւառներին իրանց տարածութեամբ և ազգաբնակչութեան թիւով գիւղական և քաղաքացի, և նրանց վրայ անձ գլուխ կընկնի հետևեալ քանակութեամբ հող. տես տարածութեան և ազգաբնակչութեան թւերը («Կոմունիստ», N 18, 1929 թիւ).

Գաւառներ և ինքնավար շրջաններ	տարածութիւն քառ. քիլոմետր	ազգաբնակչութիւնը ամբողջը	քանի հեկտար անձ գլուխ	գիւղական ազգաբնակչութիւնը	գիւղացիութիւն քանի հեկտար անձ գլուխ	համարը ըստ հողի շատութեան
Թիֆլիս	13841,4	612.048	2,2	300.289	4,6	IV
Քութայիս	14868,9	613.345	2,4	522.789	2,8	VII
Փոթի	6741,8	383.994	1,8	349.327	1,9	IX
Կախէթիա	10597,5	257.903	4,1	229.494	4,7	III
Գորի	4590	202.856	2,2	171.018	2,6	VIII
Այսպիսի	5308	175.910	3	158.863	3,3	VI
Արխազիա	8381	201.016	4,1	168.772	5	II
Աջարիա	2828,3	131.957	2,1	81.579	3,5	V
Ըվ. Օսէթիա	4309,4	87.375	5	81.557	5,3	I
Ընդհանուրը	70046,4	2.666.494	2,6	2.065.913	3,4	

Եթէ ընդունենք, որ Այսպիսիայի նոր գաւառը 205.000 ազգաբնակչութիւնից իջել է 175.000-ի, և եթէ ընդունենք, որ քաղաքի ազգաբնակչութիւնը մինչև 17.000 է 30.000-ի փոխարէն, նորից կտեսնենք, որ 0,1 տասներորդական հեկտարով անձ գլուխ անելի պակաս հող կուզայ Այսպիսիայում քան ամբողջ Վրաստանում:

Որ նա 9 գաւառներից վեցերորդ տեղը կրննէ ըստ հողի քանակի շատութեան, և եթէ անձ գլուխ 3,3 հեկտարից հանենք անայտը տարածութիւնները, 40 %, անձ գլուխ կհասնի 2 հեկտար՝ մեջը լինելով չայիրը, արօտատեղին, ջրարբին և անջրդի, խոպան և մշակուած տարածութիւնները. սա մի ողորմելի քանակ է մի երկրի համար, որտեղ հատոյթը գարին է, և ցորենի բերքը իսկ ցուրտից փչանալու վտանգի տակ, որտեղ 6 ամիս առնուած ձիւնով է ծածկուած, և միայն խոր հովիտներն են, որ պտուղ կհասնեն:

Երբ հողային այս չքաւորութիւնը կտիրէ, կամ այն է, որ Վրաստանը իր կօյունի-զացիօնի քաղաքականութիւնը չպիտի կարողանայ իրագործել, կամ այն է, որ իրագործելու համար տեղացի ժողովրդին պիտի ոչնչացնէ կամ արտաքսէ դատարկ տարածութիւններ ստեղծելու համար:

Վրաստանը դժբաղտաբար առաջինը չկարողանալով երկրորդ միջոցին է դիմած, որ հար և նման է տաճկական ջարդարար մետոդին: Այդ տխուր եզրակացութիւնը պիտի հանել՝ ի նկատի առնելով Ազդոռի, Բակուրիանի, Ծալկայի ջարդերը, բայց անելի

պերճախօս ապացոյց են թերը.

1886-ին Ախալքալակ, Ախալցխա գաւառների ազգաբնակչութիւնն է 122.590

1897— » - 142.506

1912— » - 192.251

1917— » - 204.120

1929— » - 175.000

Ուրեմն 1917-ից յետոյ երբ վրացական ղեկավարութիւնը և ազդեցութիւնը եղել է մեր հայրենիքի վրայ, 29.145 ազգաբնակչութիւն պակասած է, դեռ մի կողմ թողած բնական աճեցողութեան կորուստը, որ այս 12 տարուայ ընթացքում պիտի լինէր առնուազն 15.000 հոգի:

Այս տխուր իրականութիւնը կապացուցանէ, որ Վրաստանը անարժան է մեր երկիրը կառավարելու, քանի որ նա իբր թշնամու երկիր դիտելով պատճառ է դառած 45.000 ժողովրդեան կորստեան:

Երկրորդ, որ իրոք մեր կառավարութիւնն համարուածը կհետապնդէ նոյն քաղաքականութիւնը, ինչ թուրքերը Թուրքիայում իրանց փոքրամասնութեանց հանդէպ:

Մրա եզրակացութիւնը պարզ է և բնական, որ մենք մեր կեանքը և սերունդը չպիտի վստահենք Վրաստանի որևէ իշխանութեան և մեր կեանքի տէրը մենք պիտի լինենք մեր երկրում:

Վրաստանը բացի հողային ծաւալման իւր կորստաբեր քաղաքականութիւնից կհետապնդէ մեր երկրում հողից ստացուած եկամուտների շահագործմանը յօգուտ իրան: Նա այս խնդրում իրարու հակասական երկու սկզբունք կառաջադրէ: Երբ հարցը կվերաբերի մեր երկրի ինքնորոշման, նա կառարկէ՝ Ախալքալակ-Ախալցխայի տնտեսական կարողութիւնը այնքան աղքատ է, որ նա ինքնավար լինելու հնարաւորութիւնը չունի: Իսկ երբ հարցը կվերաբերի հայ-վրացական վէճերին Ախալքալակ-Ախալցխան իրարու մէջ բաժանելու հարցին, նրա առարկութիւնը բոլորովին հակառակն է. «Մենք չենք կարող Հայաստանին զիջել միակ հացաշատ Ախալքալակը, Վրաստանը հաց չունի»: Այս հակասութիւնները հերքելու համար դիմենք թուրքի տրամաբանութեանը: Ախալքալակ-Ախալցխան գերագանցապէս երկրագործ ժողովուրդ են, ցանում են գլխաւորապէս գարի, ցորեն: Այսպէս 1913-ին ցանուած է.

ՀԱՎԵԼՎԱԾ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հոյիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Գաւառ	դէսետաիին	աշնանացան	գարնանացան	գարի	այլք	գումար չէտվերտ
Ախալքալակ	41.069	1.480	32.905	111.031	130	145.546
Ախալցխա	15.265	6.763	1.945	6.397	797	15.902
Գումար	56.334	8.243	34.850	121.428	927	161.448

Ստացուած է չէտվէտ

Գաւառ	դէսետաիին	աշնանացան	գարնանացան	գարի	այլք	գումար չէտվերտ
Ախալքալակ	41.069	4.442	104.247	482.875	260	591.824
Ախալցխա	15.265	28.565	5.507	38.382	6.376	78.830
Գումար	56.334	33.007	109.754	521.257	6.636	670.654

Այս թուերը միայն յատուկ չեն 1913 թուականին, նրանից առաջ ևս նոյն քանակութեամբ ցանք և բերք է եղել առաւել կամ քիչ պակաս չափով, այսպէս օրինակ միմիայն Ախալքալակը բերք է ստացել 1885-ին 507.846, 1886 թուին 355.700 չ., 1887-ին 214.176, 1889-ին 283.037 չէտվէտ, իսկ 1915-ին պատերազմի պատճառով երևի, Ախալքալակ և Ախալցխա գաւառները միասին վերցրած ցանած են միմիայն 36.197 դէսետաիին - 80.154 չէտվէտ, և հատոյթ ստացած 320.946 չէտվէտ:

Ինչպէս միշտ բոլշևիկները 1913 թուականն են բռնում իբր չափանիշ ժողովրդեան թուի և կարողութեան, մենք ևս այդ թիւը օրինակ առնելով կտեսնենք, որ այդ թուականին երկու միացեալ գաւառների ամբողջ ազգաբնակչութիւնը հաւասար էր 27.109 քաղ. և

165.146 գիւղացու, ընդամենը 192.251 հոգու, որը ցանկ է 56.334 դէսետաին, 161.448 չէտ-վէտ սերմ, և ստացել 670.654 չէտվէտ բերք: Այդ թուերի համեմատութիւնը ցոյց կուտայ.

ա) որ հողի արգասաբերութիւնը պակաս է քան մէկին 4-ը, ուրեմն աղքատ է հողը, բ) որ զուտ արդիւնք եղել է 509.206 չէտվէտ կամ ($x 16,5 \text{ ֆուտ} =$) 6.541.678 փութ,

գ) որ իւրաքանչիւր գիւղացուն շունչ գլուխ եթէ 15 փութ ուտելիք գցենք, 165.000 գիւղացու ուտելիքի ծախս կգնայ 2.475.000 փութ, որով ուտելիքից և սերմից դուրս իւր շտեմարանում կմնայ զուտ հասոյթ 4.066.678 փութ, այսինքն անձ գլուխ 24,7 փութ ցորեն ու գարի,

դ) որ իւր մէջ եղած քաղաքացիների 27.105 շունչին ուտելիքը տարեկան 15 փութից հաշուելով, հարկատր եղած 406.775 փութը բաւարարելուց յետոյ, Ախալքալակ-Ախալցխան արտահանելու 3.659.903 փութի կարողութիւն ունէր:

Այս է եղել արտահանութեան գլխատր առարկան. 85.600 դէսետաին անտառները շատ քիչ օգուտ կբերէին, 279.000 գլուխ անասունները, պտուղների արդիւնքը բնակիչների բարեկեցութիւնը բարձրացնելուն կնպաստէին:

Միայն գլխատր հացահատիկների հաշիւը ի նկատի առնելով ինչ պիտի եզրակացնել.

I. որ մեր հայրենիքը սխալ է, որ աղքատ է, նա ընդհակառակը ինքնաբաւ է և նոյնքան և անելի տնտեսական կարողութիւն ունի, որքան Անդրկովկասի հանրապետութիւնները և ինքնավար շրջանները.

II. որ ճիշտ է վրացիների հաշիւը, որ մեր երկիրը հացաշատ է և կարող է արտահանութեան շտեմարան նկատուել այն չափով, որ կարող է գոցել Հայաստանի և Վրաստանի հացի բացը առանձին-առանձին վերցրած:

Որքան որ Վրաստանը հաց ներմուծելու կարիքը ունենայ, բայց հացի տէրը մենք ենք, և որ շուկան ձեռնտու լինի հոն ևս կծախուի. մենք որևէ կերպով առիթ չենք տուած և չենք էլ կարող ունենալ չծախելու մեր բերքը Վրաստանին գերադասելով այլ շուկաներում սպառել. եթէ մեր հացը ձրի կերպով չի ուզեցուի յաիշտակել մեր ձեռքից կամ կտորած գներով առնել: Եւ վերջապէս ինչպէ՞ս կարող է այդ մօտիւր առաջնորդ լինել մեր երկիրը ազատութիւնից զրկելու և Վրաստանի գաւառը դարձնելու, իբր ներքին մաքսային հարցեր չկան Անդրկովկասի Ֆէտէռասիօնի մէջ և ամեն ապրանք պիտի հոսէ այն կողմը, որտեղ կարիքը կայ, որտեղ կարիքին համաձայն ապրանքի գինը կայ: Հացի շտեմարան լինելը պատճառ բերողները մի յետին միտք ունեն, ի վերջոյ Կովկասեան Ֆէտէռասիօնի մէջ մաքսային սիստէմ մտցնելու և կամ մեր երկրի արդիւնքը քմահաճոյքով տնօրինելու: Դա չի գայ ոչ մեր և ոչ Անդրկովկասի հաշուին, այդ պատճառով էլ էլ անելի մեր բաժանումը Վրաստանից անելի քան իրանայական կդառնայ:

Էտնօգրաֆիկ պատճառը: Երկրի մը ձակատագիրը բնորոշողը պիտի լինի նրա բնակիչների ազգային կազմը, այդ չի ժխտէ և Վրաստանը, քանի որ ինքը իւր հանրապետութեան հասած է ազգային ինքնորոշման սկզբունքով, բայց նա այդ կժխտէ Ախալցխա-Ախալքալակ գաւառներին ոչ թէ մերժելով հոն եղած վրացիների չնչին թիւը և հայերի մեծամասնութիւնը, այլ առարկելով, որ հայերը եկուորներ են: Բայց միաժամանակ անկարող են ապացուցանել, որ երբևէ վրացիք Ախալցխա-Ախալքալակում եղել են գերակշռող տարր: Դա անհնար է ապացուցանել, որովհետև վրացի և հայ պատմագիրները ազգագրական ստատիստիկներ չեն յիշատակէ, միայն կասեն թէ Մարդաստան կկոչւէր Կուրի վերին հովիտը, որովհետև մարդերով բնակուած էին, կկոչւէր յետագային Մեթիսերի երկիր, որովհետև բնակիչները մեթիսեր էին: Ինչ եղան այդ ժողովրդները, ո՞ր են նոքա, ոչ ոք ոչինչ չի կարող ասել, երևի նրանք նոյն վիճակն ունեցան, ինչ Ուտիացիք, Աւղանները, գուցէ ձուլուեցին հայերի, վրացիների, թուրքերի մէջը, և ներկայ բնակիչները լինեն հայ, վրացի թէ թուրք հին մեթիսեր են կամ գուգարցիք շապիկները փոխած: Բնական է, որ անցեալում որ ժողովուրդը որ մեծ է եղել և կուլտուրապէս բարձր, նա ևս անելի է կլանել մեր նախահայրերին, այդ պարագային հաւանական է, որ հայերի մէջ անելի լուծուած լինեն քան միւսներին: Դրան հետևանք պիտի համարել այն, որ վրացական պատմագիրը (**Такишвили. Источники грузинских летописей**, с. 63) կյայտնէ, որ Սուրբ Նունէն Ջուախքում ստիպուած էր հայերէն խօսել, յատկապէս նոյնպէս կրոնական ճանապարհորդների տեղեկութիւններից, որ Ախալցխա քաղաքը XVII դարում, այսինքն աթաբէկութեան վերջալուսի 50.000 բնակչութիւն ունէր և մեծամասնութիւնը հայեր և հրէաներ են: Ռուսաց տիրապետութեան սկսելուց յետոյ է, որ կան տուեալներ ազգագրական վիճակագրութեան մասին: Ռուսները վիճակագրած

են ինչպես բնիկների, նոյնպես գաղթականների թիւը առանձին-առանձին, որից կպարզուի, որ ռուսների տիրապետութիւնից առաջ կամ այն վայրկեանին, երբ նրանք մտան Ախալցխա և Ախալքալակ, վրացիներ համարեա չեն եղել և ազգաբնակչութեան մեծ մասը եղել են հայեր, թէկուզ նրանք լինէին իրանց հայ համարող հայախօս բնիկներ կամ մեսխեր: Խօսքը տանք թուերին.

ՀԱՎԵԼՎԱԾ

Ազգեր	Ախալցխա քաղաքը 1829 թ. ռուսների մտնելու պահին / ընտանիք/	տոկոս	Խէրթիսի սանջակը 1829-ին /ընտանիք/	տոկոս	Ախալքալակի սանջակը 1929 թ. /ընտանիք/	տոկոս
Վրացի	44	7,5	128	8	58	5,2
Հայ	413	69,5	1.079	68,3	637	65,6
Հրէայ	117	19	18	1	-	-
Մահմեդական	24	4	357	22,7	282	29,2
ընդհանուր	598	100	1582	100	970	100

ՀԱՅԻՆ ԱՆՎԱԿՐԱԿՆԵՐ, 2013

Ահա սրանք են եղել հիմնական բնակիչները, որ թուրքերի տիրապետութիւնից յետոյ մնացել է ռուսներին, որից կերևի, որ հայերը բացարձակ մեծամասնութիւն են կազմում թուրքական երկու սանջակում և Ախալցխա քաղաքում, իսկ սանջակի մասին տեղեկութիւն չկայ, վրացիները կազմում են չնչին փոքրամասնութիւն, իսկ հայերից յետոյ մահմեդականներն են, որ մեծ տոկոս կկազմեն, յետագային ևս, մինչ այսօր երկրի ազգագրական պատկերը չէ փոխուած. հիմնական ժողովուրդների տոկոսային հարաբերութիւնները մնացել են նոյնը և Տաճկահայաստանից եկած հայ գաղթականները միայն պահպանել են հայերի տոկոսային բարձրութիւնը:

Այդ թւերը, որ կհաւաստիացնէ Օբօք. *Россійс. Владениѣ за Кавказомъ*, т. IV, с. 219, եթէ ճշմարտութեան կհամապատասխանին, ապա հերիւրանք է և սխալ այն կարծիքը, որ հայերը եկուորներով հայացրել են Ախալցխա-Ախալքալակը: Նա արդէն մեծամասնութեամբ հայ էր, որ եկուորները եկան անելանալու մեծամասնութեան վրայ: 1831-ին մօտ 14.000 ընտանիք հայ եկաւ և հաստատուեց այդ երկու գաւառներում, բայց նրանցից մի մասը խօլերայից փչացաւ, մի մասը գաղթեց այլ կողմեր, բայց մեծ մասը մնաց իւր նոր հայրենիքում: Բայց ներգաղթ եղաւ յետագային և մահմեդականների կողմից. որոնք փախած էին վերադարձան, իսկ միւս կողմից Ռուսաստանից աղանդաւորներ եկան և չնայելով 14.000 հայ ընտանիքների վերաբնակուելուն, հայերի տեսակարար հարաբերութիւնը մնաց նոյնը և դեռևս մի քիչ աւելի ընկաւ:

Այսպէս օրինակ, ռուսական պաշտօնական վիճակագրութեամբ հետևեալ պատկերը կներկայացնէ 1886, 1894, 1913-ի և 1917 թուի վիճակագրութիւնները.

ազգութիւն	1886թ. Ախալքալակ	1894թ. Ախալքալակ	1913թ. Ախալքալակ	1917թ. Ախալքալակ	1913թ. Ախալցխա	1917թ. Ախալցխա
Հայ	46.384	49.807	76.446	84.775	28.996	28.265
Ռուս	72	-	-	-	746	804
Վրացի	3.731	3.714	6.578	7.427	8.066	10.280
այլ և յոյն	102	56	132	-	-	89
դուխաբոռ	6.602	7.272	6.726	7.542	-	-
Մահմեդ.	6.828	4.972	5.798	5.431	49.069	16.710
Հրէայ	53	52	154	204	3.189	3.251
Լէի	-	6	-	-	-	-

ՎԷՄ համահայկական հանդես

Քիւրտ	-	590	701	904	1.922	1.511
Լրոպացի	-	-	14	13	103	81
Վրացի մահմեդ.	-	-	228	2.877	158	35.212
լեռնական	-	-	2.737	-	74	19
Շիա	-	-	11	-	13	4
Բոշա	-	-	-	-	190	461
ընդհանուր	63.799	65.869	99.725	107.163	92.526	96.947

Այսօր 1924 -ին վիճակագրական պատկերը նույնը կնտրկայացնէ, ժողովրդների տոկոսային յարաբերութիւնները նոյնն են մնացել, թէև ազգաբնակչութեան ընդհանուր թիւը պակասած է և եղած 175.000-ի:

Մի տարուց աւելի մեր առաջ բերած վիճակագրական տախտակների համեմատութիւնից պիտի եզրակացնել.

ա) որ դեռ տաճիկ տիրապետութեան ժամանակ հիմնական ազգաբնակչութիւնը եղած են առաջին հերթին հայերը 69 %, նրանից յետոյ մահմեդականները՝ 17,7%, երրորդ հերթին վրացիները 6,6%, իսկ չորրորդ հերթին հրէաները՝ 6,4%: Այս համեմատութեամբ եղած է թուրք տիրապետութեան թողած ազգաբնակչութիւնը Խէրթվիզի, Ախալքալակի սանջակներում և Ախալցխա քաղաքում, բայց Ախալցխա գաւառամասի մահմեդական ազգաբնակչութեան վիճակագրութիւնը անյայտ լինելով մեզ, և նրանց թերևս պատերազմի հետևանք շարժման մէջ լինելու հետևանք, պիտի ենթադրել, որ նրանց տոկոսային համեմատութիւնը 17,7%-ից բարձր պիտի լինէր, մինչև 30%-ը փաշայութեան սահմաններում, իսկ հայերինը 69%-ից աւելի նուազ պիտի լինէր մինչև 50%-ի սահմաններում:

բ) Ռուս տիրապետութեան ժամանակ հիմնական ժողովրդներից հայերի տոկոսային յարաբերութիւնը կբարձրանայ Ախալքալակում մինչև 79,2%-ի, իսկ Ախալցխայում կիջնի 31,5-ի: Այդ անհամաչափութիւնը առաջ է եկած Տաճկաստանի հայ գաղթականութեան ներգաղթի հետևանք Ախալքալակում, իսկ Ախալցխայում պատերազմից յետոյ մահմեդականների վերադարձի պատճառով Տաճկաստանից:

գ) Որ հիմնական ժողովրդների տոկոսային յարաբերութիւնը եղել է, և այսօր էլ այդ այդպէս է. ամբողջ նախկին Ախալցխայի փաշայութեան մէջ հայերը բացարձակ մեծամասնութիւն 54,4%, մահմեդականներ 29,4%, վրացիներ 7,5%, հրէաներ 1,7%, ընդամենը 93,1%:

դ) Մնացած մօտ 7%-ը ազգաբնակչութեան եկուորներ են ռուս տիրապետութեան ընթացքում, որից առաջին տեղը կըզբրանէն դուխարօնները 3,8%-ը, իսկ մնացած 3,4 %-ը կկազմեն այլ քրիստոնեաները, քրդերը, Լրոպացիք, լեռնականներ, բօշաներ և այլն: Ինչ կասեն այս թերը, եթէ նրանք շինծու չեն, եթէ նրանք յենուած են պատմական տուեալների վրայ, եթէ այդ պատմական վիճակագրութիւնները կազմուած են մի երրորդ անշահախնդիր ոյժի ձեռք, ինչպէսին էր Ռուս կառավարութիւնը, որ մի դարի ընթացքում շահ չունէր հայերի, մահմեդականների և վրացիների թիւը այդպէս դասաւորելու:

Այդ թուերը պարզ և որոշ կասեն, որ մեր երկրի հիմնական և ոչ հիմնական ազգաբնակչութեան 93%-ը ոչ մի առնչութիւն չունի վրացի ցեղի լեզուի, կրօնի, կուլտուրայի և սովորութեանց հետ, նրանք կպատկանեն 55%-ով հայ ժողովրդին և 30%-ով մահմեդական բնիկներին իրանց ինքնուրոյն լեզուով, բարբով և ասանդութեամբ և հակառակ են վրացականին: Եթէ այդ այդպէս է, ազգագրական տեսակետից ևս ոչ մի հիմք չկայ մեր հայրենիքը դարձնելու Վրաստանի գաւառներից մէկը:

Այդ թուերի տրամաբանութիւնը աւելի հիմք կուտայ Հայաստանին իրան միացնելու մեր հայրենիքը, քանի որ 55%-ը հայախօս հայեր են, բայց մենք հեռու ենք այդ եզրակացութիւնը հանելուց, քանի որ մնացած 45%-ը ազգաբնակչութեան այդ չպիտի ցանկան, և որ գլխաւորն է՝ հայ-վրացական անտագոնիզմը չպիտի վերանայ, որ այնքան անհրաժեշտ է Անդրկովկասի խաղաղութեան և միութեան համար:

Մեր հայրենիքի Վրաստանի մի գաւառը դարձնելուց հարկադրաբար առաջ է եկած

մեր երկրում մի ավելի խոշոր վտանգ, մահմեդական վտանգը, որը կսպառնայ դառնալ մի ական արտաքին ոյժերի ձեռքին: Վիճակագրությունից կպարզուի, որ ազգաբնակչության 30 %-ը մահմեդականներ են: Վրացիք սրանց կուզեն համարել վրացի մահմեդականներ, թուրքերն ևս կհամարեն թուրք մահմեդականներ, հայերն ևս նույնքան իրաւունք կարող են ունենալ համարելու հայ մահմեդականներ, բայց այդ երեքից և ոչ մէկը չի ուզեր հասկանալ և հարցնել մեր հայրենակից մահմեդականների կամքը, որ չի համապատասխանէ և ոչ մէկի ցանկութեան: Վաճառքի առարկայ է դառած մի զանգուած, որ իր պատմությունն ունի, որ իր սեփական կամքն ունի: Սրանք թէև կորցրած իրանց վաղեմի կրօնը և իրանց մայրենի լեզուն, երբեմն թրքալիսու, երբեմն վրացալիսու, երբեմն հայալիսու, բայց չեն մոռացած որ իրանք այլ են, քան մահմեդական թուրքը, վրացին և հայը, իրանք իրանց կհամարեն մեր երկրի տէրը, մեր հայրենիքի բնիկները: Սրանք բեկորներն են գուցէ հին Գուգարաց ժողովրդների՝ մարդերի և մեսիսերի, բայց ավելի շուտ 13-երորդ դարուց մինչ 17-երորդ դարը իշխող Սամցխեի աթաբէկների: Սրանք նրանք են, որ տապալեցին վրացական իշխանութիւնը և անկախութիւն ձեռք բերին, որ պարտութեան մատնեցին Իմլերէթի և Կախէթու վրացական թագաւորներին և Ախալցխացի Սարգիսի կամքը պարտադրեցին Վրաստանին: Սրանք նրանք են, որ կառավարուեցին Աղբուտանի օրէնքներով, և սրանք նրանք են, որ միմիայն 17-երորդ դարում քրիստոնէայ աթաբէկ Մանուչարի սպանումով իր եղբայր Բէկայի ձեռք ընդունեցին մահմեդականութիւն: Սրանք պարսիկներին փշոռող Սուրան Գեորգ Սահակաձէի որդիքն են և միաժամանակ դաւանափոխ ջաւախեցի Պէրուադիս քահանայի: Թուրքեր չեն սոքա, այլ վրացական լուծից խուսափող, մահմեդականութիւն ընդունած բնիկները: Սրանք թուրքերին մօտ են այն չափով, որ չափով նրանց կրօնակից են, բայց բնաւ երբէք ազգակից կհամարեն ինքն զինքնին, բայց երբ այսօր իրանց վրայ կիշխէ ուրիշ՝ վրացական իշխանութիւնը, համարելով նոցա «վրացի մահմեդական», դա դառած է նրանց հին վէրքը և մեր հայրենակիցներին մի յուսահատությունից կնդէ մի այլ յուսահատություն: Եթէ 17-երորդ դարում նրանք մահմեդականութիւն ընդունելու մէջ կորոնէին իրանց փրկութիւն, այսօր թուրքական օտիէնտասիօնի մէջ կորոնեն իրանց ազատութիւն: Այս տեսութիւն չէ, այլ իրական փաստ, դեռ 1918-20 թուերին կայացարէին Ազդոռում տեղական մարքսականները, սօցիալիստ Պիպինովին հաւանութեամբ, ընդդէմ վրացական իշխանութեան, Ախալցխայում ձեռք ձեռքի տուած հայերին ընդդէմ Վրաստանի և Թիւրքիայի, իսկ Ջաւախքում յենուած Թիւրքիայի վրայ ընդդէմ Վրաստանի և Հայաստանի: Երբ մի ժողովուրդ իր կամքը կարտայայտէ իր արիւնը իսկ չխնայելով, նորից նրան «վրացի» համարելով չպիտի ձգել յուսահատութեան մէջ, որից պիտի տուժէ ոչ միայն ինքը, այլ և Վրաստանն ու Հայաստանը, մտցնելով Անդրկովկասում ոչ միայն մահմեդական, այլ և թուրքական վտանգը: Այս պատճառը ավելի ևս կշեշտէ վրացական իշխանութեան վերացումը մեր երկրի վրայից ինքնորոշման և ինքնավարութեան տարրական իրաւունքը չզլանալով և մեզ:

Եզրակացություն: Վերջացնելով մեր բացատրությունները Ախալքալակ-Ախալցխայի կցման մասին՝ պիտի եզրակացնել:

1) Որ մեր երկիրը Անդրկովկասում ունենալով ռազմական նշանակություն, նա չի կարող Անդրկովկասեան այս կամ այն ժողովրդին պատկանել. եթէ կցանկացուի նրանց մէջ հաւասարակշռութիւնը պահպանել, նախանձները և իմպէրիալիզմը վերջ տալ, մեր հայրենիքը պիտի լինի չէզոքացած և դրա համար մեզ անհրաժեշտ է տալ անկախութիւն:

2) Պատմական տեսակէտից մեր հայրենիքը Վրաստան չէ, այլ դարեր շարունակ իր սեփական անկախ վիճակը ունենալով, պատմականօրէն իրաւունք ունի իր անկախութեան:

3) Որ մեր երկիրը իր տարածութեամբ և ազգաբնակչութեան թով այնքան մեծ է, որ կարող է ունենալ իր անկախութիւնը:

4) Որ մեր հայրենիքը իր տնտեսութեամբ հնարավորութիւն ունի ինքնաբաւ լինելու և իրան ծախքերը և պէտքերը հոգալու, այն չափով, որ չափով եղած հանրապետությունները:

5) Որ մեր երկիրը իր ազգաբնակչութեամբ բնաւ վրացական չէ և նա ինքնորոշուելու իրաւունք ունի:

ՇԱՎԵՆԿԼԱՅ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հոսիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Որոնք են մեր նպատակները և պահանջները

Մեր հայրենիքը իր տարածութեամբ և ազգաբնակչութեան թուով փոքրիկ լինելով, մենք հարկադրաբար ամենից անելի կցանկանք խաղաղ և ներդաշնակ կեանքը, բայց դրա կողքին, մենք խաղաղութիւնը և ներդաշնակութիւնը բնաւ չենք ցանկար մեր ազգային արդար պահանջների ոտնահարումով և մարդկային տարրական իրաւունքների խախտումով:

Խաղաղ և ներդաշնակ կեանքը ձեռք բերելու համար մենք այն համոզման չենք, որ պիտի մտնել մի երրորդ ոյժի հովանու ներքոյ, այլ ընդհակառակը իւրաքանչիւր ժողովուրդ պիտի լինի անկախ և իւր ազատ կամքով իւր անկախութիւնը պիտի սահմանաւորէ ներդաշնակեցնելով իւր անկախութիւնը իւր հարևանների հետը:

Անդրկովկասում և ոչ մի ժողովուրդ չի կարող բացարձակ անկախ լինել, առանց վնասելու իւր դրացու անկախութիւնը, առանց վնասելու միւսի տնտեսական, հաղորդակցական և այլ շահերը, և ոչ մէկը նրանցից չի ներկայացնելու այն ֆիզիքական ու բարոյական ոյժը, որ կարողանար դիմագրաւել թէ ներքին, թէ արտաքին դժուարութիւններին, ուստի մենք դէմ ենք ինչպէս մեր, տոյնպէս և Անդրկովկասի այս կամ այն ժողովրդի բացարձակ անկախութեանը:

Մեզ համար Անդրկովկասը մի է և ամբողջական և առաւելն նա կարող է բացարձակ անկախութիւն ունենալ թէ իւր մէջ ներքին ոյժ ունենայ, թէ նա ցանկանայ իւր շահերից թէլադրուած:

Անդրկովկասը իւր ոյժը կունենայ և իւր ազատութիւնը, թէ իւր մէջ եղած բազմաթիւ ազգերն ու դաւանանքները իրանց ազատութիւնը կունենան, երբ նրանք անկախ կլինեն և իրարու դաշնակցած իրանց շահերից թէլադրուած:

Այդ տեսակէտից թէլադրուած միայն դէմ լինելով մեր իսկ բացարձակ անկախութեան, կողմնակից ենք ինչպէս մեր, տոյնպէս Անդրկովկասի բոլոր մեծ և փոքր ժողովրդների անկախութեան, որոնք պարտական են իրարու հետ դաշնակցել մի ընդհանուր նպատակի շուրջը, Անդրկովկասի միութեան, տնտեսական և ֆիզիքական ոյժերի ամբողջացման և Անդրկովկասի բացարձակ ազատութիւնը ձեռք բերելու համար:

Մեր պահանջն է՝

Ախալցխա-Ախալքալակը իբր աշխարհագրական, պատմական, ազգագրական, տնտեսական մի առանձին միաւոր պիտի ունենայ իւր անկախութիւնը և իբրև անկախ մի հանրապետութիւն նա պիտի մտնի Անդրկովկասի դաշնակցութեան մէջ հաւասար իրաւունքներով նրա բաղկացուցիչ հանրապետութեանց հետ:

Ինչ պիտի լինի Ախալցխա-Ախալքալակի ներքին ղեկավարութեան ձևը:

1) Ընդունելով, որ Ախալցխա-Ախալքալակը մի միաւոր է, բայց թէ այդ միաւորը մի մասնիկը պիտի կազմէ ամբողջական մի միութեան, Անդրկովկասի միւս հանրապետութեանց կողքին, նա իւր առանձին ռէժիմը չպիտի ունենայ և իւր ղեկավարութեան ձևը պիտի լինի հար և նման Անդրկովկասի ռէժիմին: Ներկայումս Անդրկովկասում գոյութիւն ունի սովետական ռէժիմը և դա պիտի լինի Ախալցխա-Ախալքալակի ռէժիմը, քանի Անդրկովկասի հանրապետութիւնները միասնաբար չեն որոշած փոխել այդ ռէժիմը:

2) Քանի որ մենք բողոքող ենք և պայքարող փոքրամասնութեանց իրաւունքները ոտնատակ անողների հանդէպ, մեր շրջանի զարգացման և ուժեղացման ու միութեան համար մեր հանրապետութեան մէջ փոքրամասնութիւնները չպիտի անտեսուին: Մեծամասնութիւն կազմող հայերի սեփականութիւնը չպիտի դառնայ մեր հանրապետութիւնը, ինչպէս Անդրկովկասը կազմուած է անկախ հանրապետութիւնների միութիւնից, մեր միութիւնն էլ չպիտի կազմուած լինի ինքնավար միատարր թեմերի միութիւնից:

Ահա սրանք են մեր ներքին և արտաքին քաղաքականութեան հիմքերը, որոնց կիրառելու համար պիտի միանան հայ, մահմեդական, վրացի, հրէայ և դուխաբաթ ժողովրդները: